

## ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների ընդունման

### 1. Անհրաժեշտությունը

Իրավական պետության կառուցման և մարդու իրավունքների պաշտպանության արդյունավետ մեխանիզմներ երաշխավորելու Սահմանադրորեն ամրագրված դրույթների իրացումը անհնար է պատկերացնել առանց գործունակ, մասնագիտական բարձր պատրաստվածություն ունեցող, անաչառ դատական իշխանության: Իրավական պետության մեջ դատավորի սահմանադրական առաքելությունն է անկողմնակալ, արդյունավետ արդարադատության իրականացումը, հանրության շրջանում բարձր վստահություն վայելելը: Պրոֆեսիոնալ կադրերի առկայությունը պահանջում է պետության կողմից համապատասխան պայմանների ստեղծում և պահանջների առաջադրում դատավորի պաշտոնին հավակնողների համար: Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ չկա դատական համակարգ մուտք գործելու հարցում միասնական մոդել: Երկրները, դատավորի պաշտոնին ներկայացվող պահանջների, պատմականորեն ձևավորված ավանդույթների, համալսարանական կրթության բովանդակային առանձնահատկությունների հաշվառմամբ և դատական իշխանության անկախության ապահովման ժամանակակից սկզբունքների հիման վրա՝ ձևավորել են դատավորների ընտրության իրենց սեփական ընթացակարգերը:

Այդուհանդերձ, ինչպես առանձին երկրների փորձի, այնպես էլ միջազգային մի շարք փաստաթղթերի վերլուծությունը վեր է հանում ապագա դատավորների ընտրության և նրանց դատական համակարգ մուտքի հարցում որոշակի ընդհանրական մոտեցումներ, որոնք ուղեցույց են հանդիսանում գործընթացի իրավական կարգավորման հարցում:

ԵԽ Նախարարների Կոմիտեի (2000)21 հանձնարարականում ասված է, որ պետությունները պետք է ձեռնարկեն բոլոր միջոցները՝ երաշխավորելու համար իրավաբանի մասնագիտությամբ զբաղեցվելու նախապայման որպես «մասնագիտական պատրաստման և բարոյականության բարձրագույն ստանդարտների» առկայությունը:<sup>1</sup>

Միննույն ժամանակ, ԵԽ Նախարարների Կոմիտեի մեկ այլ (94) 12 հանձնարարականում նշվում է, որ «դատավորների մասնագիտական կարիերայի հետ կապված բոլոր որոշումները պետք է հիմնված լինեն օբյեկտիվ չափանիշների վրա, դատավորների ընտրությունը և նրանց առաջխաղացումը պետք է հիմնված

---

<sup>1</sup> Recommendation Rec(2000)21 Of The Committee Of Ministers To Member States On The Freedom Of Exercise Of The Profession Of Lawyer (Adopted By The Committee Of Ministers On 25 October 2000 At The 727th Meeting Of The Ministers' Deputies), para II (2).

լինի արժանիքների գնահատման վրա՝ պատշաճ տեղ հատկացնելով նրանց որակավորմանը, անկողմնակալությամբ, ունակությանը և արդյունավետությանը»:<sup>2</sup>

ԵԽ (94) 12 հանձնարարականին փոխարինած ԵԽ Նախարարների Կոմիտեի ավելի ուշ շրջանի (2010)12 հանձնարարականում, նույնպես ընդգծվում է, որ «դատավորների ընտրության և առաջխաղացման վերաբերյալ որոշումները պետք է հիմնված լինեն օբյեկտիվ չափանիշների վրա, որոնք նախապես սահմանված են օրենքով կամ հրավասու մարմինների կողմից»:<sup>3</sup> Ավելին, Եվրոպական դատավորների խորհրդակցական Խորհուրդը (CCJE), զարգացնելով օբյեկտիվ չափանիշների պահանջը, հստակ խորհուրդ է տվել անդամ պետությունների դատավորների նշանակման և առաջխաղացման համար պատասխանատու մարմիններին *մշակել և հրապարակել այդ օբյեկտիվ չափանիշները*:<sup>4</sup>

Միջազգային փորձի ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ նշված օբյեկտիվ չափանիշները իդենտիֆիկացնելու հարցում պետությունների մոտեցումները միասնական չեն: Նման ընդհանուր չափանիշներ են հրապարակված թերևս Մեծ Բրիտանիայում, Շոտլանդիայում: Շատ երկրներ այս հարցում հիմնվում են դատավորների նշանակման և առաջխաղացման համար պատասխանատու անկախ մարմինների անկողմնակալության վրա (օրինակ՝ Կիպրոս, Էստոնիա): Առանձին երկրներում ներդրված են որոշակի մոդելներ, որոնք կոչված են կոնկրետ թեկնածուի հետ կապված որոշումների հիմնավորվածության երաշխիքներ ստեղծելուն: Ֆինլանդիայում, օրինակ, համապատասխան խորհրդակցական մարմինը համեմատում է թեկնածուների արժանիքները և կոնկրետ թեկնածուին առաջադրելիս պետք է նաև հիմնավորում ներկայացնի իր որոշման համար: Գերմանիայում ևս, դատական խորհուրդները ներկայացնում են գրավոր կարծիքներ թեկնածուի՝ դատավոր պաշտոնում համապատասխանության վերաբերյալ, որոնք, թեև պարտադիր չեն Արդարադատության նախարարի համար նշանակումներ կատարելիս, սակայն գործնականում դրանց չհետևելը լուրջ քննադատության տեղիք կարող է տալ: Այդուհանդերձ, պետք է նաև նշել, որ չնայած այն հանգամանքին, որ կոնկրետ թեկնածուի առաջադրման որոշման պատճառաբանումը առողջ մրցակցության և զսպվածության գրավական է թվում, գործնականում այն ևս կարող է առաջացնել որոշակի խնդիրներ առանձին դեպքերում (օրինակ, թեկնածուների գրեթե հավասարության պայմաններում կամ տեղեկատվության աղբյուրների գաղտնիության հետ կապված):<sup>5</sup> Այսինքն, որոշակի մոդելի ընտրություն կատարելիս

<sup>2</sup> Recommendation No. R (94) 12 Of The Committee Of Ministers To Member States On The Independence, Efficiency And Role Of Judges (Adopted By The Committee Of Ministers On 13 October), Principle 1 (2c).

<sup>3</sup> Recommendation Rec(2010)12 of the Committee of Ministers to member states on judges: independence, efficiency and responsibilities, para 44.

<sup>4</sup> Consultative Council of European Judges (CCJE) Opinion no 1 (2001) of the Consultative Council of European Judges (CCJE) for the attention of the Committee of Ministers of the Council of Europe on standards concerning the independence of the judiciary and the irremovability of judges, para 25.

<sup>5</sup> Նույն տեղում, կետ 26:

պետությունները պետք է հաշվի նստեն այն հանգամանքի հետ, որ ներկայումս չի ձևավորված դատավորների ընտրության որևէ կատարյալ մոդել և դատավորների ընտրության գործընթացի հաջողությունը մեծապես հիմնվում է դատական իշխանության անկախության նկատմամբ հարգանքի և ապագա դատավորների ընտրությանը ամենայն պատասխանատվությամբ մոտենալու բարձր գիտակցության վրա:

Դատավորի պաշտոնի առանձնահատկությունը պայմանավորում է այն հանգամանքը, որ վերը նշած միջազգային փաստաթղթերը ապագա դատավորի ընտրության չափանիշների հարցում հատուկ ընդգծում են ոչ միայն նրա նեղ մասնագիտական-իրավաբանական պատրաստվածության բարձր մակարդակը, այլև որոշակի խումբ ոչ մասնագիտական որակների, այնպես կոչված՝ «արժանիքների, բարոյահոգեբանական, անձնական» հատկանիշների կարևորությունը:

Վենետիկի հանձնաժողովի 2010թ. «Դատական իշխանության անկախության մասին» զեկույցի 24-25-րդ պարագրաֆում նշվում է, որ *«արժանիքը միայն իրավաբանական գիտելիքների, վերլուծական կարողությունների կամ ակադեմիական առաջադիմության խնդիր չէ: Այն ներառում է նաև այնպիսի հարցեր ինչպիսիք են բնավորությունը, դատողությունը, հաղորդակցման հմտությունները, դատական ակտեր կայացնելու արդյունավետությունը և այլն:*

*Առանցքային է, որ դատավորը ունենա արդարադատության և արդարության ընդհանուր զգացողություն, ինչը գործնականում դժվար է գնահատելը: Թափանցիկ ընթացակարգեր և միատեսակ պրակտիկա պետք է կիրառվի այս չափանիշների գնահատման ժամանակ»:*

Նույն մոտեցումն է որդեգրվել նաև Դատավորների միջազգային ասոցիացիայի 1996թ. Կարծիքում, որտեղ շեշտվել է *«1.3 ինչ վերաբերում է դատավորների ընտրության չափանիշներին, դասական չափանիշներից բացի, որոնք ուղղված են տարբեր քննությունների միջոցով դատավորի մասնագիտական կոմպետենտությունը և իրավաբանական գիտելիքները ստուգելուն, պետք է շեշտադրում կատարվի այնպիսի չափանիշների վրա, որոնք առանցքային են երաշխավորելու համար, որ իրավունքի բնագավառի լավ տեսաբանը (good technician in the law) լինի նաև լավ դատավոր և արդյունավետ ու պատասխանատու իր գործունեության համար: Այդպիսի չափանիշներ կարող են լինել թեկնածուի հոգեբանական կերպարը, հաղորդակցման հմտությունները, լսելու կարողությունը, սոցիալական որակները և աշխատանքի կազմակերպման ունակությունները»:*<sup>6</sup>

Մասնագիտական գիտելիքներից բացի, դատավորի համար հույժ կարևոր է կուռ տրամաբանության, վերլուծական կարողությունների առկայությունը՝ բարդ խնդիրներում արագ կողմնորոշվելու մտային կարողությունը, առանցքային և ոչ առանցքային հասցերը միանյամից տարանջատելու, տեքստերը մեկ ընթերցմամբ ընկալելու, թվաբանական տեղեկատվության հետ վարվելու կարողությունը: Նման մտավոր օպերացիաների ստուգմանն ուղղված համակարգչային թեստերը աշխարհում բավական տարածված են ոչ միայն դատավորների, այլև տրամաբանական մտածողության ակտիվություն

<sup>6</sup> / <http://www.iaj-uim.org/old/ENG/01/1996.html/>

պահանջող այլ աշխատանքների ներգրավման ժամանակ:<sup>7</sup> Դատավորների թեկնածուների մոտ տրամաբանական կարողությունների ստուգման ուղղված տարաբնույթ մեխանիզմներ են կիրառվում նաև այլ երկրներում (օրինակ՝ Գերմանիա, Ռումինիա) և գոյություն ունեն տարիների փորձառություն ունեցող կազմակերպություններ, որոնք մշակում են համապատասխան թեստեր և միջազգային մակարդակով անցկացնում քննություններ: Այս առումով, տրամաբանական կարողությունների ստուգման թեստավորման մեխանիզմի ներդրումը մեծ բարդություն չի ներկայացնի, քանի որ հնարավոր է թեստավորման մշակման հարցում ներգրավել նշված կառույցներից որևէ մեկի աջակցությունը: Օրինակ՝ Ռումինիայում ավելի քան 6 տարի առաջ որպես դատավորների որակավորման ստուգման բաղկացուցիչ մաս է ներդրվել միջազգայնորեն հայտնի LSAT թեստը, որի հարցերի կազմումը սկզբնական տարիներին հանձնարարվել է LSAT կազմակերպությանը՝ զուգահեռաբար, վերջինիս աջակցությամբ, զարգացնելով տեղական կարողությունները նման թեստերի մշակման հարցում:

Միևնույն ժամանակ, հենց նույն միջազգային փաստաթղթերի պահանջ է այդ օբյեկտիվ և սուբյեկտիվ որակների գնահատման գործընթացը լինի առավելագույնս օբյեկտիվ, որի պայմաններում միայն կարելի է խոսել դատական իշխանության անկախության, նրանց բարձր դերի և հասարակության աչքերում հեղինակության մասին:

Եվրոպայի դատավորների խորհրդատվական խորհրդի (CCJE) իր թիվ 1 կարծիքում ընդգծում է, որ դատավորների ընտրության օբյեկտիվ չափանիշները և հստակ ընթացակարգերը անհրաժեշտ են նաև *«Ֆավորիտիզմի, պահպանողականության կամ կլոնավորման»* վտանգներից խուսափելու համար, որը կարող է առաջանալ դատավորների ընտրության հարցում դատական իշխանությանը բացարձակ, իսկ Արդարադատության խորհրդին՝ չկանոնակարգված և սուբյեկտիվիզմի հնարավորություն տվող լիազորություններ վերապահելու արդյունքում:

Եւս Նախարարների Կոմիտեի Դատավորների անկախությանը, արդյունավետությանը և պատասխանատվությանը վերաբերող (2010)12 հանձնարարականում, ի համեմատ նույն հարցի վերաբերյալ նախորդ (94) 12 հանձնարարականի, ուղղակիորեն նշվում է, որ դատավորների ընտրության համար պատասխանատու մարմնի *«ընթացակարգերը պետք է թափանցիկ լինեն՝ դիմորդներին իրենց պահանջով տրամադրելով որոշման հիմքում ընկած հիմնավորումները: Ձախողված թեկնածուներ պետք է ունենա որոշումը բողոքարկելու կամ առնվազն այն ընթացակարգերը բողոքարկելու իրավունք, որի հիման վրա ընդունվել է որոշումը»*:<sup>8</sup>

Դատական իշխանության անկախության համատեքստում, դատավորների ընտրության գործընթացի վերաբերյալ առավել մանրամասնեցված սկզբունքներ են

<sup>7</sup> Օրինակ, այդ նման թեստը լայնորեն կիրառվում է Եվրոպայի խորհրդի մարմիններում աշխանքի ներգրավման ժամանակ ( <http://www.shldirect.com/index.html>): Մեկ այլ նման թեստի օրինակ է LSAT-ը (<http://www.lsac.org/JD/LSAT/about-the-LSAT.asp>):

<sup>8</sup> Տես վերը, հղում 3, կետ 48.

առաջադրվել «Արևելյան Եվրոպայում, Հարավային Կովկասում և Կենտրոնական Ասիայում դատական իշխանության անկախության վերաբերյալ» Կիևյան 2010 հանձնարարականներում, որոնց Հայաստանի Հանրապետության օրենսդրության մեջ իմպլեմենտացնելու պատրաստականություն է հայտնել նաև Հայաստանի Հանրապետությունը: Հանձնարարականների համապատասխան դրույթների մարտահրավերները, մասնավորապես հանգում են հետևյալին.

1. Դատավորների ընտրության գործընթացի թափանցիկությունն ապահովելու համար անհրաժեշտ է որպեսզի ընտրության կարգը և չափորոշիչները հստակորեն սահմանված լինեն օրենքով.
2. Թափուր տեղի մասին հայտարարությունը պետք է հրապարակվի և լայնորեն տարածվի.
3. Հանրությանը պետք է մատչելի լինի դիմող բոլոր թեկնածուների (կամ առնվազն նախաորակավորված թեկնածուների ցանկը).
4. Ընտրող մարմինը պետք է լինի անկախ, ներկայացուցչական և հանրության նկատմամբ պատասխանատու.
5. Ընտրող մարմնում հարցազրույցի թեման և դրա տեսակարար կշիռն ընտրության գործընթացում պետք է նախապես սահմանված լինի.
6. Անձի անցյալի որևէ այլ ստուգում անվտանգության մարմինների կողմից չպետք է իրականացվի, բացառությամբ նախկինում դատվածության ստանդարտ ստուգումը:

Հայաստանի Հանրապետության Նախագահի «Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագիրը և ծրագրից բխող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» 2012թ. հունիսի 30-ի ՆԿ-96-Ա կարգադրությամբ ևս ընդգծվում է դատավորների թեկնածությունների ցուցակում ընդգրկվելու համար որակավորման ստուգման կարգը կատարելագործելու անհրաժեշտությունը՝ նախատեսելով հետևյալ խումբ միջոցառումները.

«3.1.1. Մշակել դատավորի թեկնածուի ոչ միայն մասնագիտական գիտելիքների, այլև որպես դատավոր գործելու ունակության և արդյունավետության, տրամաբանական հմտությունների գնահատման հնարավորություն տվող կառուցակարգեր՝ հիմնված միջազգային չափանիշների, թափանցիկության ու անաչառության սկզբունքների վրա.

3.1.2. Կատարելագործել դատավորների թեկնածուների գիտելիքների և հմտությունների ստուգման արդյունքների վիճարկման կարգը.

3.1.3. Մշակել դատավորների թեկնածությունների ցուցակում ընդգրկվելու համար թեկնածուների առաջադրման թափանցիկ և օբյեկտիվ ընթացակարգեր, այդ թվում՝ վերանայել Արդարադատության խորհրդում հարցազրույցի կարգը՝ հստակեցնելով այդ փուլի խնդիրներն ու թեման:»:

Վերը նշված միջոցառումներին համապատասխան միջոցառումներ են նախատեսված նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի գործունեության ծրագրի կատարումն ապահովող միջոցառումների ծրագրի 78-րդ և 79-րդ կետերով:

## **2. Կարգավորման նպատակը և ընկալություն**

2007թ. ընդունված Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրքը զգալի առաջընթաց քայլ կատարեց դատական անկախության ամրապնդման, արդարադատություն արդյունավետության բարձրացման, դատական համակարգը պրոֆեսիոնալ կադրերով համալրելու նպատակով համապատասխան օրենսդրական մեխանիզմների նախատեսման, դատավորի պաշտոնում նշանակվելու և առաջխաղացման ընթացակարգերի օբյեկտիվացման հարցում: Դատական օրենսգրքում 2011թ.-ին կատարված փոփոխություններով և լրացումներով հիմք դրվեց դատավորների թեկնածությունների ցուցակում քրեական, քաղաքացիական և վարչական մասնագիտացման բաժինների առկայությանը՝ որպես մասնագիտացված և արդյունավետ դատական համակարգի կայացման խթան:

Անցած տարիների փորձի ուսումնասիրությունը, ցույց է տալիս, սակայն, որ դատական համակարգը դատավորի մասնագիտական պատրաստվածության հանդեպ հասարակական ակնկալիքներին համապատասխանող անձանցով համալրելու համար թերևս անհրաժեշտ է օրենքի մակարդակով հստակեցնել դատավորների ընտրության չափանիշներն ու ընթացակարգերը: Այս առումով, 2007թ. ընդունված Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրքը, կարգավորելով դատավորների թեկնածուների ընտրության և նրանց հետագա մասնագիտական պատրաստման գործընթացը, այդուհանդերձ չի անդրադառնում ընտրության հիմքում ընկած չափանիշների հարցին, չի հստակեցնում դատավորի պաշտոնին հավակնող անձանց նկատմամբ առաջադրվող մասնագիտական և ոչ մասնագիտական գիտելիքների պահանջները, թեկնածուների ընտրության գործընթացի մաս կազմող Արդարադատության խորհրդում հարցազրույցի նպատակը և ընթացակարգը: Բարձր գնահատելով դատավորների ընտրության գործընթացում մեծ անկախ մարմնի, ինչպես Արդարադատության խորհրդն է, ներգրավումը, այդուհանդերձ այդ մարմնի գործունեությունը չի կարող դուրս մնալ դատավորների ընտրության գործընթացի օբյեկտիվության երաշխավորման պահանջներից:

Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» նախագծով առաջարկվող փոփոխությունները, ի թիվս այլ հանգամանքների, մասնավորապես միտված են առավել մանրակրկիտ կարգավորումներ նախատեսելու դատավորների ընտրության գործընթացի վերաբերյալ՝ կանխատեսելի դարձնելով դատավորների պաշտոնին հավակնողներից ակնկալիքները:

Դատավորների ընտրության գործընթացը փոփոխող նախագծով սկզբնապես առաջարկվում էր դատավորների ընտրության գործընթացի մասն դարձնել *տրամաբանական ունակությունները ստուգող և հոգեբանական թեստերը*: Այս թեստերը լայնորեն կիրառվում են միջազգային

պրակտիկայում, սակայն դրանց ներդրումը զգալի ռեսուրսներ է պահանջում: Չնայած թեսթերի ներդրման համար ֆինանսական և մասնագիտական օժանդակության պայմանավորվածություններ արդեն իսկ ձեռք են բերվել դոնոր կազմակերպությունների հետ, սակայն հեռանկարային առումով դրանց ներդրումը, թերևս, պահանջում է կրթական համակարգի փոփոխություն և ներդրում հենց ԲՈՒՀ-երում:

Հաշվի առնելով տրամաբանական թեսթերի ներդրման հետ կապված բարդությունները մեր խորհրդակցությունները ուղորտում զգալի փորձ ունեցող արտասահմանյան գործընկերների հետ թույլ տվեցին վեր հանել առաջադրված նպատակներին հասնելու առեվժնի օժանդակություն և հուսալի տարբերակ: Ամերիկացի, կանադացի և եվրոպացի դատավորների և իրավաբանների հետ մեր խորհրդակցությունների ընթացքում մատնանշվել են մի շարք ընդհանուր սկզբունքներ, որոնց լույսի ներքո ձևավորվել է դատավորներ քննությունների կազմակերպման հարցում այլընտրանքային հայեցակարգ:

Դատավորների ընտրության այլընտրանքային մոդելը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1. Դատավորների ընտրության գործընթացը իր բոլոր փուլերով չպետք է կենտրոնանա բացարձակապես դատական իշխանության ձեռքում: Այս գործընթացում դատական իշխանության մասնակցությունը պետք է հավասարակշռված լինի և զսպվի հանրային մեծ վերահսկողությամբ և քննական հարցաշարերի մշակման գործառույթների տարանջատմամբ: Նույն անձիք միաժամանակ չեն կարող կատարել քննական հարցերի մշակման, գնահատման և Արդարադատության խորհրդում հարցազրույցի վարման գործառույթներ:
2. Կարևոր է, որ քննական հարցերի կազմումը պատվիրվի մասնագիտացված կազմակերպությունների, քանի որ պահանջում է համապատասխան հմտությունների առկայություն: Սկզբնական շրջանում, մինչև տեղական կարողությունների զարգացումը, դրանք պետք է հնարավորինս պատվիրվեն մասնագիտացված միջազգային կազմակերպությունների՝ տեղական փորձագետների մասնակցությամբ: Ձուգահեռաբար պետք է իրականացվեն տեղեկան կարողությունների զարգացմանն ուղղված ծրագրեր՝ այնպես, որ հետագայում քննական հարցեր կազմումը իրականացվի տեղում: Այս դեպքում հնարավոր են նաև նախնական թեսթերի անցկացումներ՝ ապագա թեկնածուներին որակավորման գործընթացին պատրաստելու համար:
3. Լավ դատավորի ընտրության համար պետք է ներթափանցել նրա արժանիքների ուղորտ: Այս պատճառով, դատավորների ընտրության գործընթացում զգալի դեր պետք է ունենա նրա անհատականության մասին տեղեկությունների հավաքագրումը և վերլուծությունը: Այս մոտեցումը լայնորեն կիրառվում է հատկապես անգլոսաֆերիկյան իրավական համակարգում, որտեղ թեկնածու անցյալի մասին տեղեկությունները հավաքագրվում են երաշխավորագիր-նամակ տված անձանց հետ զրույց ունենալով, անձի համալսարանական վարքագծի, անցած մասնագիտական ուղու, ուսումնառության և մասնագիտական գործունեության ընթացքում

դրսևորած վարքագծի, տույժերի, հասարակական կյանքում նրա մասնակցության և կարգապահության ուսումնասիրությունների հիման վրա:

4. LSAT տիպի տրամաբանական թեստերը պետք է կազմեն իրավաբանական ֆակուլտետ ընդունվելու գործընթացի մաս՝ թույլ տալով զարգացնել և գնահատել անձի տրամաբանական հմտությունները:

Դատավորների ընտրության գործընթացը հիմնվի հետևյալ ընթացակարգերի վրա.

### **1. Իրավունքի հիմնական ճյուղերում թեստ.**

Թեստերի շրջանակներում լայնորեն պետք է կիրառել ոչ միայն բազմակի ընտրության թեստեր, այլ առավելապես հիպոթետիկ խնդիրներ: Դրանց կազմումը չպետք է լինի դատական իշխանության մենաշնորհը, այն պահանջում է հատուկ հմտություններ և առնվազն սկզբնական շրջանում, մինչև տեղական ունակություններ զարգացումը, պետք է պատվիրվի մասնագիտացված կազմակերպություններին: Միջազգային մակարդակով գործում են նման բազմաթիվ կազմակերպություններ: Հիպոթետիկ խնդիրները ունեն թաքնված և ակնհայտ հանգամանքներ, որոնցից յուրաքանչյուրը բացահայտելու համար անձը ստանում է համապատասխան միավոր: Հիպոթետիկ խնդիրներում առկա հանգամանքների շրջանակը հստակ է ստուգողների համար և թեկնածուի գնահատման համար կարևոր է, որ նա վեր հանի և վերլուծի այդ հանգամանքներից յուրաքանչյուրը: Վերլուծության որակը, օրենքի նորմերին հղումը զգալիորեն չպետք է ազդեն գնահատականի վրա, քանի որ համարվում է, որ իրավաբանը միշտ էլ ձեռքի տակ ունի օրենքը: Այս դեպքում, ստուգողները ունենում են որոշակի ողողորդ ստանադարտ և եթե անձը գտել է պահանջվող հանգամանքը խնդրում, նա ունի առնվազն երաշխավորված որոշակի միավոր դրա համար: Այս ճանապարհով որոշակիորեն հաղթահարվում է գնահատման սուբյեկտիվիզմը՝ դրա սահմանների ուրվագծմամբ:

Քննությունների առաջին փուլում ստուգելով դատավորի ընդհանուր մասնագիտական գիտելիքների մակարդակը, քանի որ դատավորը ենթադրաբար պետք է տիրապետի իրավունքի հիմնական ճյուղերի բնագավառում բազային գիտելիքների, անցում է կատարվում նեղ մասնագիտական գիտելիքների ստուգմանը՝ ըստ համապատասխան մասնագիտացման:

2. Համապատասխան մասնագիտացման բնագավառում հիպոթետիկ խնդիրների լուծում.
3. Մանրակրկիտ հարցազրույց արդարադատության խորհրդում.

ԱՒ-ում հարցազրույցը պետք է ավելի երկար տևի և լինի բավական մանրակրկիտ՝ ունենալով 3 ուղղություն.

**1. Անձի մասնագիտական ուղու, անհատականության բացահայտում.**

Սրա հիմքում ընկած են լինելու անձի վերաբերյալ կատարված հարցումների արդյունքում հավաքագրված տեղեկությունները, դրանց վերաբերյալ անձի դիրքորոշումները, անձի մասնագիտական ուղու, գիտական հետաքրքրությունների, ձեռքբերումների ներկայացումը:

**2. Հիպոթետիկ իրավաբանական հարցի շուրջ դիրքորոշման ներկայացում:**

**3. Ղատավորի էթիկայի հարցերի շուրջ հիպոթետիկ իրավիճակի վերաբերյալ դիրքորոշման ներկայացում.**

Այս հիպոթետիկ իրավիճակները տարբերվելու են խնդրի լուծումից: Այս դեպքում անձին տրվելու է որոշակի իրավական դրույթ, որի շուրջ նա պետք է արտահայտի իր կարծիքը, օրինակ՝ դատավորի կարգավիճակի, միջազգային փաստաթղթերի, օրենսդրական հիպոթետիկ փոփոխությունների շուրջ: Այս պարագայում կարևոր է լսել անձի բանավոր, սպոնտան ելույթը և վերլուծությունը որոշակի իրավական հարցի վերաբերյալ: Դրա միջոցով Արդարադատության խոհուրդը հնարավորություն է ստանում, ոչ թե գնահատել անձի մասնագիտական գիտելիքները, որոնք արդեն իսկ գնահատվում են գրավոր քննությունների ժամանակ, այլև որպես դատավոր գործելու արժանիքները, տարբերակելու գրավոր փուլում իրենց մասնագիտական գիտելիքների հարցում լավ դսևորած թեկնածուների շրջանից լավագույններին: Դրանք արժանվույնս հանդես կգան դատավորի պաշտոնում:

Հարցազրույցի ընթացքում տրվող հարցերը ևս պետք է կազմվեն անկախ հանձնաժողովի կողմից և ընտրվեն վիճակահանությամբ: Կարևոր է, որ դատական իշխանության ներկայացուցիչները և, մասնավորապես ԱԽ անդամները, հնարավորինս ներգրավված չլինեն հարցերի կազմման գործընթացին:

ԱԽ-ում հարցազրույցի ընթացքում առանձային հանգամանքը պետք է լինի հանրային վերահսկողության ապահովումը՝ նիստին օրենսդիր, գործադիր իշխանության ճյուղերից, ՀՀ նախագահի աշխատակազմից, փաստաբանական համակարգից և հասարակական կազմակերպություններին օրենքով սահմանված թվով ներկայացուցիչների մասնակցությամբ: Նման եղանակով հանրային վերահսկողությունը պետք է կազմի դատավորների ընտրության գործընթացի առանցքը, և երաշխիք լինի Արդարադատության խորհրդում հարցազրույցի գործընթացի օբյեկտիվության, թափանցիկության և հավասարակշռման համար:

ԱԽ յուրաքանչյուր անդամին տրվելու է նաև մեկ բաց հարցի հնարավորություն, որը կօգնի բացահայտելու անձի անհատականությունը:

Հարցազրույցի ժամանակ խորհրդի անդամներին տրամադրվում է հարցաթերթ, որտեղ հստակ նշված են այն հատկանիշները, որոնք անհրաժեշտ են և կաևոր դատավորի համար և խորհրդի անդամները ըստ հարցազրույցի արդյունքների գնահատում են յուրաքանչյուր թեկնածուին՝ նշելով իրենց նկատառումները գնահատվող հատկանիշների վերաբերյալ: Օրինակ, Կալիֆորնիայի պալատ

(bar) ընդունվելու համար (դրա մեջ են մտնում դատավորները, դատախազները և փաստաբանները) կարևորվում են հետևյալ հատկանիշները.

- Իրավաբանական փորձառություն,
- Անկողմնակալություն
- Ազնվություն
- Ճնշումներից ազատ լինելու ունակություն
- Մասնագիտական որակներ
- Մտավոր ունակություններ
- Դատողություն
- Հանրային հարգանք
- Հավասար արդարադատությամբ հակվածություն
- Դատական տենպերամենտ
- Հաղորդակցության հմտություններ
- Առողջական վիճակ:<sup>9</sup>

Այս ճանապարհով, ապահովվում է, որ բոլոր անձանց գնահատեն նույն հատկանիշների հիման վրա: Հարցազրույցի արդյունքում ԱԽ-ն գրում է զեկույց յուրաքանչյուր թեկնածու մասով, որտեղ ընտրված թեկնածուների համար ներկայացվում է մանրամասն, թե ինչ հատկանիշների հիման վրա են ընտրել այդ թեկնածուին: Իսկ մերժվածների դեպքում, առավել ընդհանուր գծերով ներկայացվում է, թե ինչու անձին չեն ընտրել:

### **3. Անկալվող արդյունքը**

Այսպիսով, նախագծի հիմնական առանձնահատկություններն են.

#### **1. Բարձրացվել են դատավորների ընտրության գործընթացի օբյեկտիվությունը ապահովող երաշխիքները:**

Այս առումով, Նախագծում առաջարկվող փոփոխությունները ունեն 2 ուղղվածություն.

Ա. բովանդակային փոփոխություններն են նախատեսվում դատավորների թեկնածուների գիտելիքների ստուգման գործընթացում և մանրամասնեցնում են այն այնպես, որ հնարավոր լինի գնահատել հավակնորդի մոտ ոչ միայն որակավորման, այլև որպես դատավոր գործելու **ունակության և արդյունավետության** տարրերի առկայությունը.

Բ. Բարձրացնում են օբյեկտիվության գործակիցը գնահատման ընթացակարգերում:

Օբյեկտիվությունն ապահովող մեկ այլ կարևոր նորամուծություն է Արդարադատության խորհրդում **հարցազրույցի բովանդակության և ընտրության գործընթացում դրա տեսակարար կշիռի հստակեցումը**, ինչը նաև և՛ 2010թ.-ի Կիևյան հանձնարարականների, և՛ ԵԽ 2010 (12), և մի շարք այլ առանցքային միջազգային փաստաթղթերի պահանջն է: Տարբեր երկրների փորձի ուսումնասիրությունը, որտեղ ընտրության գործընթացում ներգրավված են այլ մարմիններ, վկայում է

<sup>9</sup>Ընտրության գործընթացի մանրամասները հասանելի են հետևյալ կայքում՝ <http://www.calbar.ca.gov/AboutUs/JudicialNomineesEvaluation/Background.aspx>

այն մասին, որ գնահատման սուբյեկտիվ ընթացակարգերը համադրվում, օբյեկտիվացվում և հակակշռվում են գնահատման որոշակի օբյեկտիվ մեխանիզմներով:

Այս առումով նախագծում.

- հստակեցվել է հարցազրույցի նպատակն ու բովանդակությունը, այն է՝ դիմորդի անցած մասնագիտական ուղու, դատավոր դառնալու մոտիվացիայի և նրա անձնական հատկանիշների՝ պահանջվող կարճ ժամանակահատվածում իրավական խնդիրներում հանպատրաստից կողմնորոշվելու, դրանք մեկնաբանելու կարողությունների, ինքնատիրապետման, վարվեցողություն և այլնի, վերհանում.
- տեղ է գտել նաև հարցազրույցի տևողության ժամանակային կարգավորում.
- նախատեսվել է Արդարադատության խորհրդի կողմից Հանրապետության Նախագահի հաստատմանը ներկայացվող թեկնածությունների ցուցակում հարցազրույցի արդյունքներով ընդգրկված անձանց ընտրությունը հիմնավորելու պահանջ, ինչը ուղղակիորեն բխում է նաև եւս 2010 (12) հանձնարարականի դրույթներից:

Քննական գործընթացի օբյեկտիվության ապահովմանն է ուղղված նաև որակավորման թափանցիկության ապահովմանն ուղղված պահանջը: Մասնավորապես, նախատեսված է, որակավորման գրավոր ստուգման ողջ ընթացքի ուղիղ հեռարձակումը՝ որակավորման քննության անցկացման դահլիճից դուրս գտնվող տարածքում, գրավոր քննությունների և Արդարադատության խորհրդում հարցազրույցի ողջ ընթացքի տեսաձայնագրությունների մատչելիություն, հանրային վերահսկողություն քննական գործընթացի նկատմամբ:

## **2. Ապահովված է դատավորների թեկնածությունների ցուցակի համալրման մասին հայտարարության, ինչպես նաև հավակնորդների անունների հրապարակայնությունը:**

Կիևյան հանձնարարականներին ընդառաջ, նախագծում սահմանված է, որ հայտարարությունը հրապարակվում է <http://www.azdarar.am> հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետ կայքում և դատական իշխանության պաշտոնական ինտերնետ կայքում:

Ավելին, նախատեսված է, որ նույն կարգով հրապարակվում են որակավորման գրավոր քննությունների արդյունքներով անցողիկ միավորներ հավաքած դիմորդների ցուցակը, այդ թվում՝ յուրաքանչյուր դիմորդի կրթության, հետբուհական աշխատանքային գործունեության վերաբերյալ տեղեկությունները: Նման նորմերի գոյությունը նպաստում է քաղաքացիական հասարակության մեջ հասարակական վերահսկողության ակտիվացմանը՝ դրանով իսկ էլ ավելի ընդգծելով ու բարձրացնելով դատավորի պաշտոնի հեղինակությունը և նրանց ընտրության գործընթացին պետության կողմից ցուցաբերվող առանձնակի ուշադրությունը:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների ընդունմամբ իրագործվում է դատական համակարգը բարձ մասնագիտական պատրաստվածություն, դատավորի պաշտոնի համար անհրաժեշտ որակներով օժտված անձանցով համալրելու պետական քաղաքականությունը, ներդրվում են հավակնորդներ օբյեկտիվ գնահատման գործընթացն ապահովող մրցակցային

ընթացակարգեր, իրացվում են դատավորների ընտրության գործընթացի թափանցիկությունն ու հաշվետվողականությունը ապահովելու վերաբերյալ միջազգային փաստաթղթերի պահանջները: